ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2015 թվականի N 1353 - Ն

ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ԵՎ ՎԱՂ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ (ՀԱՄԱՐԺԵՔ) ՄՆՈՒՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 8-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) մանուկներին և վաղ տարիքի երեխաներին անվտանգ և համապատասխան (համարժեք) սնուցում ապահովելու նպատակով կրծքով կերակրման խրախուսման ազգային ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) մանուկներին և վաղ տարիքի երեխաներին անվտանգ և համապատասխան (համարժեք) սնուցում ապահովելու նպատակով կրծքով կերակրման խրախուսման

ազգային ծրագրի իրականացման 2016-2020 թվականների գործողությունների ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ մանուկներին և վաղ տարիքի երեխաներին անվտանգ և համապատասխան (համարժեք) սնուցում ապահովելու նպատակով կրծքով կերակրման խրախուսման ազգային ծրագրի 2017-2020 թվականների գործողություններն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում նախատեսելու հնարավորության հարցը քննարկել տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կազմավորման գործընթացով նախատեսված ժամկետներում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացված բյուջետային հայտի առկայության պայմաններում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. նոյեմբերի 24
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
նոյեմբերի 19-ի N 1353 - Ն որոշման

Ա Զ Գ Ա Յ Ի Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ԵՎ ՎԱՂ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ (ՀԱՄԱՐԺԵՔ) ՄՆՈՒՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ

Ի. ՆԱԽԱԲԱՆ

1. Վաղ մանկության շրջանում առողջ աճի և զարգացման ապահովման, մանկական մահացության կանխարգելման կարևորագույն նախապայման է մանուկների սնուցման և առողջության բարելավումը: Մինչև 1 տարեկան կրծքով սնվող երեխաների մահացության ռիսկը շնչառական և փորլուծային հիվանդություններից 7-10 անգամ ցածր է արհեստական սնվողների համեմատությամբ: Միայն ի հաշիվ այս գործոնի մանկական մահացությունը կարելի է կրճատել 10 %-ով:

2. Ըստ պաշտոնական վիճակագրության, կրծքով կերակրման ցուցանիշը (հաշվետու տարվա ընթացքում մեկ տարին լրացած երեխաների մեջ մինչև 4 ամիս լրիվ կրծքով սնված երեխաների տոկոսը) 2014 թվականին կազմել է 84%: 2014 թվականի հաշվետու տարվա ընթացքում մեկ տարին լրացած երեխաների 68,8% սնվել է բացառապես կրծքով՝ մինչև 6 ամսականը: Սակայն, ըստ Հայաստանի ժողովրդական և առողջապահական հարցերի վերջին, 2010 թվականին իրականացված հետազոտության (այսուհետ՝ ՀԺԱՀՀ) տվյալների, բացառապես կրծքով կերակրվել է մինչև 6 ամսական երեխաների 35%-ը: Թեև ցուցանիշների առումով ՀԺԱՀՀ-2005 թվականի համեմատությամբ արձանագրվել է որոշակի առաջընթաց, այնուամենայնիվ, իրավիճակը դեռևս հեռու է բավարար լինելուց:

3. Ակնհայտ է կրծքով կերակրման իրավիճակի շարունակական բարելավման ուղղությամբ համալիր միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը՝ որպես մանկական մահացության իջեցման լավագույն ռեզերվ:

II. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

4. Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել՝

1) «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ օրենք).

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի նիստի N 40 արձանագրության 1-ին կետով հավանության արժանացած Երեխաների սնուցման բարելավման հայեցակարգը և հայեցակարգի իրականացման 2015-2020 թվականների գործողությունների ծրագիրը:

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

5. Ծրագրի նպատակն է՝

1) երեխաներին կրծքով սնուցման կազմակերպման պատշաճ գործելակերպի ներդրման, կրծքով կերակրման աջակցության և խրախուսման ճանապարհով երեխաների կրծքով կերակրման իրավիճակի բարելավում՝ ուղղված նրանց առողջ աճի և զարգացման ապահովմանը, հիվանդացության և մահացության կրճատմանը: Հիմնական նպատակի հասանելիությունը հնարավոր է ապահովել ստորև ներկայացված ենթանպատակների/ակնկալվող արդյունքների հաղթահարման պարագայում (2020 թվականի սահմանային ժամկետում): Այն է՝

ա. մինչև 6 ամսական երեխաների շրջանում բացառապես կրծքով սնուցման ցուցանիշի աճ 1/4-ով: 2020 թվականին կապահովվի ցուցանիշի 45% և ավելի մակարդակ՝ 2010 թվականի 35%-ի փոխարեն,

բ. բացառապես կրծքով կերակրման «մեդիան» ցուցանիշի բարելավում 1/2-ով: 2020 թվականին այն կկազմի նվազագույնը 3 ամիս՝ 2010 թվականի 1.8 ամսվա փոխարեն,

գ. «Մանկանը բարեկամ» նախաձեռնության ծավալների և այդ կոչումն ունեցող բուժհաստատությունների թվի ավելացում 25%-ով:

IV. ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Ծրագրի նպատակների իրականացման համար ծրագրային միջոցառումներն ուղղված են հետևյալ խնդիրների լուծմանը՝

1) խթանել կրծքով կերակրման քարոզչությանն ուղղված միջոցառումները.

2) բարելավել կրծքով կերակրման և օրենքի դրույթների կատարման վերաբերյալ տեղեկատվության հավաքումը և վերլուծությունը.

3) ապահովել կրծքով կերակրման խրախուսման վերաբերյալ բուժաշխատողների կրթելուն ուղղված միջոցառումները.

4) ընդլայնել առողջապահական կազմակերպություններում նորածիններին բարյացակամ ծառայությունների տրամադրումը.

5) նպաստել կերակրող մայրերի և նրանց երեխաների համար նախատեսված նպաստավոր պայմանների ստեղծմանը.

6) բարձրացնել հանրային իրազեկվածությունը.

7) ապահովել միջգերատեսչական համագործակցությունը:

V. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

7. Կրծքով կերակրման պատշաճ գործելակերպի վերաբերյալ քարոզչությունը պետք է իրականացվի դրա համար հնարավոր բոլոր միջոցներով՝ ինչպես մոր և մանկան ոլորտում ներգրավված բուժաշխատողների աշխատանքային պարտականություն-

ների շրջանակներում, այնպես էլ մայրերի փոխօգնության խմբերի հետ անմիջական հանդիպումների և տեղեկատվական տարբեր միջոցների օգնությամբ:

8. Ծրագրի գործողության ամբողջ ընթացքում պետք է ձեռնարկվեն միջոցներ՝ բուժաշխատողների տեսական գիտելիքները և գործնական հմտությունները բարելավելու, կրծքով սնուցման և վաղ հասակի երեխաների սնուցման կազմակերպման վերաբերյալ առկա ուղեցույցների և ապացուցողական հենքով գործելակարգերի ներդրման ուղղությամբ՝ առողջական խնդիրներ ունեցող նորածինների կերակրման հետ կապված, ինչպես նաև կրծքով կերակրման հարցում դժվարություններ ունեցող մայրերին անհրաժեշտ հոգեբանական-գործնական աջակցության և մասնագիտական խորհրդատվություն ապահովելու համար:

9. Անհրաժեշտ է իրականացնել «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրանից բխող այլ իրավական ակտերով սահմանված բուժաշխատողների գործառույթների վերաբերյալ ուսուցում՝ վաղ հասակի երեխաների բուժօգնություն իրականացնող բժշկական կազմակերպությունների բուժանձնակազմի շրջանում՝ դրանց մեջ ամրագրված կրծքով կերակրման վերաբերյալ քարոզչությանն ուղղված բուժաշխատողների գործելակերպը բարելավելու համար:

10. Ծրագրի իրականացման ընթացքում կապահովվի կերակրող մայրերի և նրանց երեխաների համար նախատեսված նպաստավոր պայմանների ստեղծում բժշկական կազմակերպություններում՝ ծննդօգնության հաստատություններում և երեխաներին ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպություններում՝ «Մանկանը բարեկամ» նախաձեռնության ընդլայնման միջոցով:

11. Կրծքով կերակրման գործելակերպի բարելավմանը մեծապես կնպաստի ամբողջ հանրության իրազեկումը՝ բնակչության բոլոր խմբերի շրջանում կրծքով կերակրման

նկատմամբ դրական դիրքորոշում ձևավորելու և մայրերին լրացուցիչ աջակցություն տրամադրելու համար: Կնախատեսվեն միջոցառումներ հաղորդակցության ծրագրերի, տեղեկատվության տարածման, սոցիալական մոբիլիզացիայի միջոցառումների իրականացման, համայնքի և տեղական հասարակական կազմակերպությունների ներգրավման ուղղությամբ:

12. Կրծքով սնուցման կազմակերպման իրավիճակի, ծրագրի շրջանակներում իրականացված գործողությունների արդյունավետության գնահատման, երեխաների սնուցման ոլորտում այլ ծրագրային միջոցառումների մշակման և ներդրման նպատակով անհրաժեշտ են ինչպես գերատեսչական խողովակներով, այնպես էլ այլընտրանքային հետազոտություններով և պարբերական դիտարկումներով ստացված տվյալներ, ուստի ծրագրով կնախատեսվեն միջոցառումներ՝ կրծքով կերակրման իրավիճակի և օրենքի դրույթների կատարման վերաբերյալ տեղեկատվության հավաքման և վերլուծության ուղղությամբ:

13. Ծրագրով նախատեսված միջոցառումների արդյունավետ իրականացումը հնարավոր է հասարակության տարբեր սեկտորների համագործակցության ապահովման պարագայում, ինչի համար կարևոր է միջգերատեսչական և միջսեկտորալ համագործակցության ապահովումը: Այդ նպատակով նախատեսվում է ստեղծել միջգերատեսչական համակարգող մարմին, որի գործառույթների մեջ կմտնի նաև կրծքով կերակրման իրավիճակի պարբերաբար ուսումնասիրությունը, տեղեկատվության վերլուծությունը և համապատասխան առաջարկների ներկայացումը:

VI. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ

14. Ծրագրի իրականացումը նախատեսվում է ապահովել շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների համագործակցությամբ:

VII. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

15. Մանուկներին և վաղ տարիքի երեխաներին անվտանգ և համապատասխան (համարժեք) սնուցում ապահովելու նպատակով կրծքով կերակրման խրախուսման ազգային ծրագիրը կիրականացվի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում յուրաքանչյուր տարվա համար նախատեսված միջոցների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
նոյեմբերի 19-ի N 1353 - Ն որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ԵՎ ՎԱՂ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ (ՀԱՄԱՐԺԵՔ) ՍՆՈՒՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառումները	Ակնկալվող արդյունքը	Միջոցառման կատարման չափանիշը	Ժամկետը	Պատասխանատու կատարողը	Համակատարողը	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Կրծքով կերակրման խրախուսման հարցերի համակարգող մարմնի ստեղծում, նրա գործունեության կարգի և գործառույթների շրջանակների սահմանում	արդյունավետ միջսեկտորալ համագործակցության ապահովում, ընթացիկ խնդիրների վերհանում և լուծումների առաջարկում	«Համակարգող մարմինը ստեղծելու, գործունեության կարգը և գործառույթների շրջանակները սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման	2016 թ.	ՀՀ առողջապահության նախարարություն		Ֆինանսավորում չի պահանջվում:
2.	Կրծքով կերակրման խրախուսման հարցերի համակարգող մարմնի կողմից կրծքով կերակրման իրավիճակի պարբերաբար ուսումնասիրություն, տեղեկատվության վերլուծություն և համապատասխան առաջարկները ներկայացնելը	կրծքով սնուցման կազմակերպման իրավիճակի, ծրագրի շրջանակներում իրականացված գործողությունների արդյունավետության ընթացիկ գնահատում, խնդիրների վերհանում և լուծումների առաջարկում	ծրագրի գործողության իրավիճակի գնահատում՝ համապատասխան առաջարկների ներկայացմամբ՝ տարեկան առնվազն 1 անգամ	2016 թ.	ՀՀ առողջապահության նախարարություն		Ֆինանսավորում չի պահանջվում:

3.	«Մանկանը բարեկամ» նախաձեռնության շարունակականության ապահովում	բժշկական կազմակերպություններում կրծքով սնուցման համար բարենպաստ պայմանների ստեղծում՝ երեխաների բարեհաջող սնուցման 10 քայլերի ներդրման միջոցով	տարեկան առնվազն 2 բժշկական կազմակերպություն կստանան «Մանկանը բարեկամ» կոչում	2016 թ. և շարունակական	ՀՀ առողջապահության նախարարություն	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (համաձայնությամբ)	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
4.	«Մանկանը բարեկամ» կոչում ունեցող բժշկական կազմակերպությունների վերագնահատում	«Մանկանը բարեկամ» կոչում ունեցող բժշկական կազմակերպություններում երեխաների բարեհաջող սնուցման 10 քայլերի պատշաճ կատարման դիտարկում, երեխային և կերակրող մորն աջակցող միջավայրի բարելավման առաջարկները ներկայացնելը	Տարեկան առնվազն 2 «Մանկանը բարեկամ» կոչում ունեցող բժշկական հաստատություն կանցնեն վերագնահատում:	2016 թ. և շարունակական	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀԿ-ներ (համաձայնությամբ) Մասնագիտական ասոցիացիաներ (համաձայնությամբ)	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
5.	«Մանկանը բարեկամ ծնունդատներ նախաձեռնություն» վերանայված ձեռնարկի տեղայնացում և ներդրում	մանկանը բարեկամ նախաձեռնության գործընթացում միջազգային նոր մոտեցումների կիրառում	ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված ձեռնարկ	2017-2018 թթ.	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀԿ-ներ (համաձայնությամբ) Մասնագիտական ասոցիացիաներ (համաձայնությամբ)	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ

6.	Անհաս և հիվանդ նորածին-ներին, կրծքով կերակրման դժվարություններ ունեցող մայրերին խորհրդա-տվություն և աջակցություն տրամադրելու հմտությունների բարելավմանն ուղղված՝ ծննդօգնության հաստատու-թյուններում կարողու-թյունների հզորացում, մասնագետների նպատակային ուսուցում	բժշկական կազմակեր-պություններում միջին բուժանձնակազմի խորհրդատվության հմտությունների բարելավում	յուրաքանչյուր տարի առնվազն 15 բուժաշխատող կանցնեն վերապատ-րաստում՝ կրծքով կերակրման խորհրդա-տվության և աջակցության տրամադրման գործնական հմտությունների վերաբերյալ	2017 թ. և շարունա-կական	ՀՀ առողջապահու-թյան նախարարություն	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (համաձայնու-թյամբ)	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
7.	Ծնողական կրթության իրականացում, մայրական դպրոցի կայացմանն ու տարածմանն ուղղված միջոցառումների խթանում	կրծքով կերակրման մայրերի դրական փորձի փոխանակում և տարածում, երեխայի սնուցման և խնամքի վերաբերյալ գիտելիքների տրամադրում	առողջության առաջնային պահպանման հաստատություններում ծնողական կրթության կենտրոնների/մայրական դպրոցների աշխատանքի կազմակերպման վերաբերյալ մշակված և ներդրված ուղեցույց մշակված և բժշկական կազմակերպություններին տրամադրված ծնողական կրթության ստանդարտ խորհրդատվական փաթեթ առողջության առաջնային պահպանման հաստատություններում տարեկան առնվազն 12 ծնողական ուսուցման դասընթացի իրականացում	2016 թ. և շարունա-կական	ՀՀ առողջապահու-թյան նախարարություն	միջազգային և հասարակական կազմակեր-պություններ (համաձայ-նությամբ)	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ

8.	«Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք) և այլ իրավական ակտերի շրջանակներում մանկան սնուցման վերաբերյալ տպագրվող գրականության և մանկան սնուցմանն անդրադարձող կայքերի բովանդակության դիտարկում	օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին ոչ համապատասխան տեղեկատվության հայտնաբերում և դրա վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելը	դիտարկման արդյունքների՝ ՀՀ առողջապահության նախարարին ներկայացված ամփոփ զեկուցագիր	2016-2017 թթ.	ՀՀ առողջապահության նախարարություն	հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) Մասնագիտական ասոցիացիաներ (համաձայնությամբ)	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
9.	Իրազեկման միջոցառումներ՝ ուղղված բուժաշխատողներին, համայնքին, ընտանիքին, ծնողներին, մայրերին/խնամողներին՝ 1) վաղ հասակի երեխաների բուժօգնություն իրականացնող բժշկական կազմակերպությունների անձնակազմի իրազեկում օրենքի դրույթների վերաբերյալ. 2) ծնողների/խնամողների համար երեխայի սնուցման և խնամքի հարցերին նվիրված տեղեկատվական նյութերով ապահովում (գրքույկներ, հուշաթերթիկներ և այլն). 3) ԶԼՄ-ների միջոցով ծնողների իրազեկմանն ուղղված սոցիալական մոբիլիզացիայի ծրագրերի իրագործում (հեռուստահաղորդումներ, ֆիլմեր, ելույթներ, ԶԼՄ-ներում տպագրված հոդվածներ և այլն)	օրենքի կիրարկման արդյունավետության բարձրացում, մայրերին/խնամողներին, հասարակության լայն խավերին ազգային և միջազգային ռազմավարություններին համահունչ գիտելիքների տրամադրում	Նորածինների/երեխաների խնամք և բուժօգնություն իրականացնող բոլոր բժշկական կազմակերպությունները գրավոր իրազեկված են օրենքից բխող իրենց պարտականությունների վերաբերյալ: յուրաքանչյուր տարի նորածինների մայրերի առնվազն 50%-ը կապահովվեն երեխայի սնուցման և խնամքի հարցերին նվիրված տեղեկատվական նյութերով կիրականացվի ԶԼՄ-ների միջոցով հանրային իրազեկմանն ուղղված տարեկան առնվազն 6 միջոցառում	2016 թ. և շարունակական	ՀՀ առողջապահության նախարարություն	միջազգային և հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ

10.	Հայաստանի ժողովրդագրական և առողջական հարցերի հետազոտության շրջանակներում երեխաների սնուցման կարգավիճակի գնահատում	երեխաների կրծքով սնուցման կարգավիճակի վերաբերյալ այլընտրանքային տվյալների հավաքագրում	Հայաստանի ժողովրդագրական և առողջական հարցերի հետազոտության արդյունքների հրապարակված զեկույց	2016 թ.	ՀՀ առողջապահության նախարարություն		ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
11.	Օրենքի դրույթների կատարման իրավիճակի ուսումնասիրություն և գնահատում՝ հասարակական սեկտորի ներգրավմամբ, (բժշկական կազմակերպություններ, առևտրի օբյեկտներ, մանկական սննդի պիտակներ, զանգվածային լրատվամիջոցներ, հարցումներ)	վերհանված են օրենքի խախտման առանձին դեպքեր, իրականացված են միջոցառումներ՝ դրանց շտկման ուղղությամբ, ներկայացված են առաջարկներ՝ իրավիճակի բարելավման ուղղությամբ	համապատասխան զեկուցագրեր՝ իրավիճակի բարելավման առաջարկներով	2016 թ. և շարունակական	ՀՀ առողջապահության նախարարություն	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ միջազգային և հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19..1.2015